

ՄԵԼԿ

Տարեկան գինը 10 ռուբլի, կես տարվան 6 ռուբլի, Առանձին համարները 5 կոպեկով:

Թիֆլիսում գրվում են միմյանից խմբագրատան մէջ:

Մեր հասցեն. Тифлис, Редакция «Мшакъ».
Կամ Tiflis, Rédaction «Mschak».
Տ է լ է Ք օ Ն № 253.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ (բացի կիրակի եւ տօն օրերէն):

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով:

Յայտարարութիւնների համար վճարում են իւրաքանչիւր բառին 2 կոպեկ.
Տ է լ է Ք օ Ն № 253.

ՀԻՄՆԱԳԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

Գրիգորի քահանայ Երզնկեանց սրտի ցաւով յայտնում է աղգականներին եւ ծառայողներին, որ կիրակի, փետրվարի 25-ին, իր միակ քոյր՝

ԽԱՂԼՈՒ ՏԵՐ-ՅԱՎՀԱՆՆԻՍԵԱՆ ՔԱՂԱՆԹԱՐԵԱՆՑԻ

մահւան 12-րդ օրը, Զրկինեանց ս. Կարապետ եկեղեցում լինելու է պատարագ եւ հոգեհանգիստ: Պատարագի սկիզբը 10¹/₂ ժամին, հոգեհանգիստը—11¹/₂ ժամին: 1—1

Յովսէփ եւ Լեւոն Բարսեղեան Յովսէփեանները, Հովսէփեան Բարսեղեան Սալիսեանները, Շուշանիկ Յովսէփեանեան Յովսէփեանը եւ Գրիգոր Գեորգեան Սալիսեանը, ցաւօք սրտի յայտնում են իրանց աղգականներին եւ բարեկամներին իրանց անմոռանալի եւ թանկագին:

ԳԱՅԵԱՆԷ ԽԱՂԱՍՏՐԵԱՆ ՅՈՎՍԷՓԵԱՆԻ

առաջինների—մօր, երկրորդի—սկսերով եւ երրորդի զոքանչի մահը, եւ ինչորում են չնորհ բերել յուղարկաւորութեանը, որը տեղի է ունենալու չաբաթ օրը, ամսին 24-ին, առաւօտեան ժամը 10-ին իր բնակարանից, Բարձրակայա փողոց, տուն թաւաձայանի № 10, դէպի ս. Նշան եկեղեցին եւ այնտեղից Խօջիվանքի գերեզմանատուն: 1—1

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Կարօտ են ձեր օգնութեան.—ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Մամուլ. Օպերային ներկայացումները. Նամակ Խմբագրութեան. Ներքին լուրեր.—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Նամակ Գերմանիայից. Արտաքին լուրեր.—ՀԵՌԱԳԻՐՆԵՐ.—ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ.—ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ. Կարօտ գիւղացիների մէջ:

ԿԱՐՕՏ ԵՆ ՁԵՐ ՕԳՆՈՒԹԵԱՆ

«Մշակի» վերջին երեք համարներում մենք ամբողջ կերպով ներկայացրինք մի-

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԿԱՐՕՏ ԳԻՒՂԱՑԻՆԵՐԻ ՄԷՋ

(Վերջ)

Ի՞նչ պէտք է անեն գիւղացիները իրանց ապրուստը եւ կարիքները հայթայթելու համար:

Նրանք ծախեցին տնային անասունների մի մասը, կամ իրանց ամբողջ ունեցածը եւ գնեցին հացի պաշարներ, բայց դրանով հարցը չէր լուծվում. պէտք էր հողաւ հետեւեալ ամիսներին եւ շաբաթների համար:

Առաջին գործերից մէկն այն եղաւ, որ գիւղացիների մի մասը դիմեց պանդխտութեան՝ կախատանք որոնելու համար քաղաքներում եւ ճանապարհներում: Պէտք է նկատել, որ Ախալ-քալաքի դաւառի գիւղացիները առհասարակ պանդխտութեան սովոր չեն: Նրանք մինչեւ այժմ լաւ թէ վատ կարողացել են կառավարվել գիւղատնտեսութեան արդիւններով եւ պէտք չեն զգացել կողմնակի աշխատանքին դիմելու: Մասնաւոր առումով էին պանդխտութեան այն գիւղերը, որոնք ներկայումս վնասվել են միջատներից: Այդ գիւղերը իրանց աւելորդ կարիքները հոգալու նպատակով, դարձեալ դիմում էին գիւղատնտեսութեան եւ կապալով վերցնելով մասնաւոր հողեր, մշակում էին նրանց: Գիւղացիների մէջ կային այնպիսի հարուստ տներ, որոնք կարողանում էին ցանել 400—700, նոյն իսկ 1000 պուդ հացահատիկ: Աշխատելու տեղ կար եւ պէտք չէր զգացվում օտարութեան եւ ուրիշ պարագայումներին դիմելու:

Կարելիք ստիպեց նոր աշխատանքի աղբիւրներ որոնելու: Բայց որովհետեւ գիւղացիները անսովոր էին մշակութեան նոր ձեւերին, եւ չէին հասնում մրցել ուրիշներին հետ, ուստի նրանց մեծ մասը կրկին վերադարձաւ գիւղերը: Վաճառական գիւղից պանդխտութեան գնաց մօտ 200 մարդ, որոնցից 150-ը արդէն վերադարձել են:

Չատերից վնասված գիւղացիների վիճակը եւ տեսանքը, որ կարօտութիւնը շատ ընդարձակ կերպով մուտք է գործել գիւղական տները:

Մեր առջեւ կանգնած է մի աշխատանք, երկրագործ ժողովուրդը, որ կարողացել է իր աշխատանքի միջոցով մշտապէս իր կեանքը ապահովել եւ իր պարտաւորութիւնները կատարել պետութեան առաջ, բայց որը այսօր, ձախորդ հանգամանքների շնորհիւ, զրկվել է իր տարվալի բերքից եւ անկարող է հայթայթել իր օրեկան ապրուստը:

Դիւիսակ գիւղի 60 հողի գնացածներից 35-ը վերադարձել են: Գիւմուրդա գիւղի 50 հողի գնացածներից վերադարձել են 30-ը: Չանդուրա գիւղի 30 հողի գնացածներից վերադարձել է կէսը: Օրջա գիւղից 25 հողի աշխատանք ունեն իրանց գիւղի մօտ գտնվող խնուղու վրա: Մշադրա գիւղից մօտ 20 հողի աշխատանք են գտել Մանգլիսի կողմերում: Կօթիկա գիւղից հեռացել են մօտ 50 հողի, որոնք սկսում են վերադառնալ:

Գիւղացիների մի մասը աշխատանք ունի Ախալքալաքում, բայց այդտեղ շատ դժուր էր կայ: Այդ աշխատանքը պատահական է եւ օրեկան աշխատանք է 20—30, երբեմն 40 կոպեկ մշակին: Իսկ երբ ամբողջ օրվա համար դժուր էր կայ, մշակը ստանում է յատուկ յանձնարարութիւնների համար 10—15 կոպեկ: Գիւղացիները այդպիսի յանձնարարութիւններն էլ ուրախութեամբ կատարում են եւ ստացած փողով գիւղերիցից սեւ հաց գնելով վերադառնում են տուն միմիջարկելու իրանց ընտանիքները:

Յամենայն դէպս պէտք է ենթադրել, որ գիւղացիների մի մասը, մօտ 200—250 հողի, չեն վերադառնալով գիւղերը եւ մասնաւոր աշխատանք կունենան ուրիշ տեղերում:

Գարունը մօտենում է: Մարտի կէսից, եթէ եղանակները նպաստաւոր լինեն, կարելի կը լինէր սկսել երկրագործական աշխատանքներ: Սակայն կարելի է արդեօք ապահով կերպով սերմ գցել հողի մէջ, արդեօք միջատները նորից չեն փչացնի ցանքերը:

Մի քանի գիւղացիներ վճռել են մի կամ երկու տարով տեղափոխվել ուրիշ տեղեր եւ իրանց ցանքերը անել այնտեղ: Չանդուրա գիւղում կան այդպիսի ցանկացողներ 15 տուն, որոնք պէտք է գնան կարսի նահանգը, Վաչիան գիւղից մօտ 15 տուն պէտք է գնան Չաղվեր եւ Սաղամօ լճերի կողմերը եւ հող վերցնեն տեղական կալուածատէրերից, Դիւիսակից կը գնան 5 տուն, Գիւմուրդայից 1 տուն գնում է Ախալքալաքի գաւառի Շալաշի կողմ տեղը: Մշադրա գիւղից շատերը պէտք է հող վերց-

նալ: Գիւղացիները վաճառել են եւ վաճառում են իրանց տան անասունները՝ հաց ձեռք բերելու համար, իսկ նրանց մի նշանաւոր մասը ամեն բան վաճառանոց է հանել եւ այլ եւս չեն չունի ծախելու: Պէտք է լուրջ կերպով հոգ տանել տաւապող ժողովուրդի մասին:

Դիցուք գիւղացիների մի մասը, մօտ հարիւր տուն, կը պանդխտեւ ուրիշ տեղեր կապալով հողեր մշակելու, մի 200 հողի դործ կը գտնեն զանազան քաղաքներում եւ ճանապարհներում, մի 150—200 հողի աշխատանք կը գտնեն օֆիցերների համար կառուցանելիք շինութեան վրա, մի 500—600 հողի դործ կը գտնեն երկրաշարժից վնասված գիւղացիների համար շինվելիք տները վրա: Բայց այդպիսով անկարելի կը լինի ապահովել աշխատանքի ընդունակ բոլոր ձեռքերը եւ բացի այդ կը մնան աւսուցանական վիճակի մէջ շատ տներ, որոնք չունեն լուրջ աշխատանքի ընդունակ տղամարդիկ:

Եթէ նոյն իսկ աջողվի գտնել աշխատանքի լաւ աղբիւրներ գիւղացիների համար, դարձեալ մինչեւ դործի կազմակերպութիւնը անհրաժեշտ է ապահովել նրանց ապրուստը եւ կարողութիւն տալ առանց նոր զոհերի ձեռնարկել ծրագրած աշխատանքներին: Իսկ բացի այդ պէտք է հոգ տանել սերմացու հայ յայթայթելու գիւղացիներին եւ կարողութիւն տալու, որ ցանկացողները փորձեն անեն սերմանելու այնպիսի բոյսեր, որոնք չեն վնասվի միջատներից:

Պատուարապէս հաշուած՝ ամենամասն հրաժեշտ կարիքները ապահովելու համար հարկաւոր է ունենալ առնուազն մի քսան հիւնդ հազար ընդհանուր:

Մեր հասարակութիւնը, որ կարողացաւ

նեն Սաղամօ լճի ափերում Հասան-աղա եւ Դուրսուն-բէգ կալուածատէրերից: Այդպէս եւ միւս գիւղերը հող վերցնելու եւ մշակելու այդ ձեւը այստեղ յայտնի է մարաբայութիւն անունով:

Ի՞նչ է մարաբայութիւնը:

Գիւղացիի կապալով հող վերցնելով կալուածատէրից կամ բազմաձող գիւղացուց, մտնում է հետեւեալ պայմանաւորութեան մէջ: Հողատէրը տալիս է լծկան եղներ, սերմացու, դուրսուն, հնձու, կալում եւ ստացած բերքը բաժնուում իր եւ հողատէրի մէջ: Այդ բաժնուումն ժամանակ հողատէրը վերցնում է ամբողջ դարմանը եւ իր տուած սերմացուն, այնուհետեւ մնացածը հաւասար կերպով բաժնուում է երկու կողմերի մէջ: Առանձին պայմանաւորութեամբ գիւղացիի կարող է վերցնել եւ դարմանը, կամ ստանալ ուղիղ ամբողջ բերքի մի երրորդը մասը: Մարաբայութեան գնացած ժամանակ գիւղացին տեղափոխվում է նոր հողի վրա մեծ մասամբ ամբողջ ընտանիքով: Երբ վերջացաւ պայմանը, գիւղացին պէտք է վերադարձնէ հողը այն դուրսուն մէջ, ինչպէս որ նա վերցրել է: Օրինակ, այս տարի մարաբայութեան գնացողները, որովհետեւ իրանք վերցնելու են հողերը արդէն անցեալ տարվա նից հերկված, իրանք էլ պարտաւոր են հունձը վերցնելուց յետոյ, հերկել դաշտերը եւ այնպէս վերադարձնել հողատէրին:

Այդպիսով գուցէ մի հարիւր տուն առաջին կարգի գիւղացի կարող լինեն երկրագործութեամբ ապահովել իրանց հացի կարիքը:

Իսկ նրանք, որոնք չեն գտնելու մարաբայութեան, այլ մնալու են գիւղերում, զբաղված են վերեւ գրած հարցի լուծման խնդրով: Այնանք, որքան գիւղացիներ գտնվում էին միջատների գրամազկից: Այդ գումարը բաժնավեց գիւղացիների մէջ: Սակայն քչերը օգտվելին այդ փոխառութիւնից սերմացու գնելու եւ ցանելու: Շատերը օրական կարիքի անմիջական աղբիւրները օգտվելու համար եւ ցանեցին շատ քիչ անցանց: Համեմատաբար աւելի ճշգրտա-

զաղթականների, ուսանողների, երկրաշարժից վնասվածների եւ ուրիշ կարօտների համար առատ նուիրաբերութիւններ անել, պէտք է այս անգամ էլ դործին վերաբերվի զթափառ հոգով եւ իր նպատակներով օգնէ իր երկրագործ շինական եղբորը:

Միջատներից վնասված գիւղացիները անցեալ տարի, երբ իրանց կարողութիւն ունէին, օգնեցին իրանց հարեաններին, որոնք վնասվել էին երկրաշարժից: Այժմ իրանք օգնողներն են կարօտ օգնութեան: Մի թողնէք նրանց՝ օգնութեան ձեռք մեկնեցէք եւ ձեր նպատակներով միմիջարեցէք առաւապող ժողովուրդը:

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

Մ Ա Մ Ո Ւ Լ

Օտար բառերի գործածութեան առիթով մենք շատ անգամ ենք խօսել: Մենք միշտ ասել ենք, չը պէտք է օտար բառերի գործածութիւնը ի չարք գործ դնել, ոչ էլ ընկնել օտար բոլոր բառերը հայերէնի թարգմանելու ծիծաղելի ծայրայեղութեան մէջ: «Հանդէս Ամսօրեային» յայտնի է մեր այդ հայեացքը, բայց եւ այդպէս, նա չէ կարողանում ազատվել այն ֆանատիկոսական ատելութիւնից, դէպի օտար բառերը, որ յատուկ է կեանքից կտրված, հնու-թիւններով ապրող վանական միաբանութեան: «Հանդէսը» մեզ դասեր է տալիս: Նա ասում է.

«Մշակը» գիտէ թէ իւր տկար կողմը նրա է, եւ ճարտարութեամբ զայն չօտարեցնելու իր նպատակը գիւղացիները զօր կընեն: Եւ «որ թղթակցութիւն պէտք է գրել եւ ոչ թէ կօրէսպօնընդհալ—այդ ինքն ըստ ինքեան հասկանալի է»: Եւ ասկայն անհասկանալի է թէ ինչու համար ինք չի դործա-

ցանքների մասին մտածել եւ այն պատճառով, որ նրանց ցանքները մեծ մասամբ դարձնանցան են եւ ուրեմն դեռ մտածելու ժամանակ շատ կար:

Ցանկ, թէ չը ցանել: Այդ հարցը գիւղերում քննվում էր ամբողջ ձմեռվայ ընթացքում: Նա վճռվում էր այս ու այն կերպ: Կան գիւղացիներ, որոնք համար մինչեւ այժմ էլ հարցը չէ լուծված: Բայց գիւղացիների մեծամասնութիւնը դրական վճիռ է կապարել: Գիւղացիները ցանքս պէտք է ունենան ոչ միայն հացահատիկ ստանալու, այլ եւ դարման պաշարելու համար: Գիւղերից շատերը մարգագետիններ եւ խոտաշաքեր չունեն եւ եթէ յարմարութիւն ունեն՝ այդպիսի հողեր վերցնում են մասնաւոր կալուածատէրերից: Դիւիսակ գիւղը 1240 ռուբլի է տալիս էլմիածնապատկան Գեօրգիւի հողի համար, որտեղ ամբողջ ամառը արածում են գիւղի նախիրները եւ հօտերը: Իսկ առհասարակ գիւղերը օգտվում են իրանց դաշտերի խոզաններից՝ կենդանիներ արածացնելու համար:

Այնպէս 1900 թուականի դիտողութիւններից, ի միջի այլոց, պարզվել էր, որ աշնանացան չափաւոր կամ գիւղուկ հացահատիկի ցանքները թէեւ նոյնպէս ենթարկվում են միջատների արշաւանքին, բայց համեմատաբար աւելի փոքր աստիճանով, քան դարձապէս հացահատիկները: Այդ հանգամանքը ամբողջ եղաւ ենթադրելու, որ գիւղացիները եթէ ցանեն գիւղուկ, կարող են աւելի ապահով լինել ցանքների ապագայի մասին: Երկրի գլխաւոր իշխանութիւնը այդ յոյսով կարգադրեց տալ գիւղացիներին աշնանացան սերմանելու համար 15,000 ռուբլի թիֆլիսի նահանգի գիւղատնտեսական գիւղերի մէջ: Սակայն քչերը օգտվելին այդ փոխառութիւնից սերմացու գնելու եւ ցանելու: Շատերը օրական կարիքի անմիջական աղբիւրները օգտվելու համար եւ ցանեցին շատ քիչ անցանց: Համեմատաբար աւելի ճշգրտա-

դրեր զայս: Ահա այս է ինքնակալ կեանքը, եւ հիմ է որ պատ. Մշակին ինքնակալ կեանքը իրենց հարկանէ, կամ տեսնել չուզեր: Այս խօսքերից այն է դուրս գալիս, թէ Մշակը իմանալով, որ պէտք է գրել թղթակցութիւն, երբեք չէ գործ ածում այս հայերէն բառը, այլ միշտ գործ է ածում կօրէս պօսիկներ: Ինչպէս երեւում է, յօդուածագիր Հ. Վ. Մելք. նոր է վերադարձել Տաւրիսիայից եւ կեանքում Մշակին երեւալ չէ տեսել: Ուրիշ կերպ չենք կարողանում հասկանալ այս անբարեխղճ վկայութիւնը: Եթէ այդպէս չէ, ապա ուրեմն թող վարդապետը ցոյց տայ գոնէ մի դէպք, երբ Մշակը գործ ածած լինի թղթակցութիւն: Եւ խորհուրդ է տալիս դրա տեղ գործ ածել թատերադրութիւն: Շատ դեղնեղիկ Բայց վարդապետը գիտէ թէ ինչ է օպերան: Պէտք է ենթադրել, որ գիտէ, քանի որ ապրում է Վիեննայում. թէ եւ վարդապետը իրաւունք չունի թատրոն մտնել, բայց երեւի կրնայ, որ նրա բեմի վրա ներկայացվում են բաղմամտեակ բաներ—դրամա, արագեղիս, կոմիդիա, վոդևիլ, ֆարս, օպերա, օպերետ, բալետ, ֆէերիա եւ այլն: Այս բոլոր բաները թատերադրութիւն են, բայց մենք ինչ անենք, որ մեր ընթերցողին հասկացնենք թէ այս ինչ օրը թատրոնում պիտի լինի թատերադրութիւն այն տեսակը, որ կոչվում է օպերա: Գրեցինք թատերադրութիւն, բայց յայտնի է, օրինակ, որ Պետլեյն թէ դրամա է եւ թէ դրամատիքական օպերա, «թատերադրութիւն» բառը ինչ հասկացողութիւն կը տայ ընթերցողին: Նա նախ եւ առաջ բաց կանէ «Հայկազն» առձեռն բառարանը եւ կը տեսնէ, որ այնտեղ չը կայ էլ այդ բառը եւ, ի հարկէ, մտքում յանդիմանութիւն կը կարգայ Միխիլ-բեան հայերէն, որոնք հայերէն լեզու գիտցողի միանշանակ են վայելում, բայց մի եւ նոյն ժամանակ այսպիսի թերաւ բառարաններ են հրատարակում. երկրորդ է եւ այն ժամանակ կը ծիծաղէ Հ. Մելք. վրա եւ կասէ. ինչ մեղք է, երբ ես «թատր» օտար բառի տեղ գործ ածելու լինեմ «օպերա» օտար բառը:

գտնվեցին աշխատանքների վերաբերությունները Բիրյա, Պրոնիս, Չուչկա, Կոթլիս եւ Մուր-շախեթ գիւղերը, որոնք ցանկ են տան վրա հաշված մի-մի դեպքեր: Միւս գիւղերում աշխատանքներ սերմանել են մի քանի տներ, Չան-դուրայում մէկ տուն, Վաչիանում մի քանի տուն մօտ 200 պուղ, Գիւմուրդայում 5 հոգի եւ այլն: Ինչ եւ իցէ, աշխատանքների ժամանակն անցաւ: Այժմ խօսք կարող է լինել գարնանացանի մասին: Գիւղացիները վճռել են ցանել թէ ցորեն եւ թէ դարի փոքր չափով: Ով ցանում էր քանի օր օրում, կը ցանի 1-2-3 սօմար: Թէ եւ գիւղացիները հաւատարմ են, որ ցանածը ապահով կանի, այնուամենայնիւ իրանք չեն կարող հաշտվել այն մաքի հետ, որ նրանք պէտք է մնան առանց ցանքի: Գոնէ փորձել պէտք է: Եւ այդ փորձն անելու համար պէտք է ցանել թէկուզ սահմանափակ քանակությամբ: Ով գիտէ, գուցէ վտանգը թուլացել է կամ անցել է եւ երկիրը կարող է նորից վարձատրել մշակի աշխատանքը: Անկասկած աւելի անվտանգ կը լինի ցանել այնպիսի բոյսերի սերմեր, որոնք չեն վնասվում միջատներից, օրինակ կտաւտ, չալգես, գետնախնձոր, վիկա, քրուշնա, արեւածաղիկ: Եւ արդարեւ գիւղացիները մտադիր են այդ բոյսերի ցանքները այս տարի ընդարձակել: Սակայն այդ բանը կարող են անել ոչ բոլորը եւ օսանալուստիակ կերպով: Բանն այն է, որ կտաւտի եւ չալգեսի ցանքները պահանջում են ուժեղ, թարմ, խամացած եւ երաշտի չենթարկվող հողեր: Իսկ վնասված գիւղերում հողի մեծ մասը տարեցտարի մշակութեան մէջ լինելով չէ հանգստանում եւ չէ խամանում: Մեր իշխած գիւղերից կտաւտի ցանքներին սովոր է Դիլիսկան, որ եւ մտադիր է ցանել, որքան կարող լինի: Կտաւտը արդիւնաբեր բոյս է. աջող տարիներում նա կարող է տալ մէկին 10—18 սերմ, իսկ մէկ դեպքերին վրա ցանվում է մօտ 4 պուղ: Գետնախնձորի մշակութիւնը շատ ցանկալի է եւ նա նպատակադարձոր է այն պատճառով, որ կը տայ մարդկանց կերակրելու համար նիթ. բայց գիւղացիների մեծ մասը ծանոթ չէ նրա մշակութեան հետ, իսկ մի քանի փորձեր է նախկին տարիներում եղել են անհաջող: Ինչ վերաբերում է միւս բոյսերին, որոնք չեն կարող ցանվել մեծ քանակությամբ, որովհետեւ մեծ պահանջ չը կայ նրանց վերաբերությունները: Վիկա ցանվում է Գիւմուրդայում, քրուշնա Տրիւնայում, գետնախնձոր Մա-շախեթում, Տրիւնայում եւ բոլոր այն գիւղերում, որտեղ չորային չէ եւ հողը փուխը է: Այդ բոյսերի մշակութեանը մասամբ արդիւն է հանդիսանում եւ այն, որ ազդեցականութիւնը սերմացու չունի: Կտաւտի սերմը Ախալքալաքում արդէն ծախվել է եւ ուղարկվել դէպի երկաթուղի: Այդ սերմը այժմ գնում է արտասահման, այն է Մարսէլ: Ախալքալաքի պոլի վաճառականներից մէկը, Յակոբեան, գրեւորում է մեծ քանակությամբ այդ սերմից արտասահման ուղարկելու նպատակով: Այժմ Ախալքալաքում հալիւ կարելի լինի գնել մի 30 սօմար կտաւտ, որի սօմարը արժէ 23—24 բուրլ: Իսկ սերմանում համար հարկաւոր է մօտ 100 սօմար: Շաղկապի պաշարները համարեա չը կան քաղաքում: Գետնախնձոր կարելի է գնել Դամալի գիւղից եւ գոլթօրոնե-րից: Դամալայի գետնախնձորը աւելի լաւ տեսակի է, համեմ եւ արժէ պուղը 40—45 կօպէկ, իսկ գոլթօրոնեիցը աւելի ստոր տեսակի է եւ արժէ պուղը 25 կօպէկ: Այդպիսով առաջ է գալիս գիւղացիներին սերմացու հայթայթելու կարեւոր հարցը: Գարունը մօտ է, իսկ եղած սերմացուի պահանջները ծախվում են: Կանցի մի քանի ամիս եւ այլ եւս մեկարդում կը լինի նոյն իսկ թանգ գնով ձեռք բերել սերմացու: Գիւղերի համար: Գաղաքի ժողովրդից մի երկու անձ մտադիր են գիւղացիներին կտաւտի սերմ տալու այն պայմանով, որ գիւղացին իր ստացած բերքից հանելով սերմացուն, տայ սերմատէրին բերքի մի երրորդ մասը: Բայց դա մի մասնաւոր օ-

Մենք ասել ենք հարկը անգամ եւ կը կրկնենք մի եւ նոյնը ամեն անգամ: Կեսանք առաջ է գնում, նոր բառերը, նոր հասկացողութիւնները մտնում են մեր մէջ, պէտք է կամ լուռ ու մտնել միայն, կամ խօսել, չը քաշվելով օտար բառերի գործածութիւնից: Մենք, ի հարկէ, չափ ուրախ կը լինէինք, որ իրանց հայագիտութեամբ այնքան ապարդիւն կերպով պարծեցող Միխիլ-բեանները տային մեր ձեռքը պատրաստ բառեր: Բայց դառն էլ հենց այն է, որ Միխիլ-բեանները միայն լաց լինել գիտեն, իսկ ցաւին ճար անկը նրանց գործը չէ: Ահա մի օրինակ: Դենք թէ ուղում ենք թարգմանել «Ֆէլդշեր» բառը, ի՞նչ պէտք է անենք. բառը գերմանական է եւ, ուրեմն, մենք պիտի դիմենք գերմաներէն-հայերէն բառարանին: Ահա Վիեննայի Միխիլ-բեանները հրատարակել են Կոյլաի գերմաներէն-հայերէն բառարանը: Բայց ենք անուր եւ feldscher բառի դիմաց տեսնում ենք—բանալի վարսավիրայ (եր. 604): Որ դա ճիշդ ստուգաբանութիւն է—ոչինչ չունենք ասելու: Բայց ինչ օգուտ ճիշդ ստուգաբանութիւնից: Դուք, օրինակ, ուղում էք ասել թէ Շուլաւէր գիւղը վարձել է Ֆէլդշեր, եւ ի՞նչ կամենալով հայկական լեզուի մաքրութիւնը պահպանել, գրէք թէ Շուլաւէր գիւղը վարձել է բանալի վարսավիրայ, ով ձեզ կը հասկանայ: Ոչ ոք, ի հարկէ: Եւ ձեռք լրացնել էլ կը դառնայ մի «Հանգէս Ամսօրեայ» իր 50 բաժանորդներով: Երէկ մենք ասացինք, որ «Հանգէս Ամսօրեայ» գրուի կորցրել է: Այս դժբախտ հանգամանքը շատ է աչքի ընկնում այդ ամսագրի մէջ, սակաւ այն ժամանակից, երբ խմբագրութիւնից հեռացան Հ. Մէնէլիչեանի եւ Հ. Գալսեփեանի պէս կարող մարդիկ: Ահա Հ. Մէնէլիչեան, որ մի զարգացած լեզուագէտի համբաւ ունի, «Հանգէս» նոյն համարում գրել է մի յօդուած Լուսինեանի բառարանի մասին: Արտատպում ենք այդ յօդուածից հետեւեալ կտորը: Այս տողերը գրողն երբէք յանձն չի կրնար առնուիլ օրինակի աղագաւ, heptylidene քիմիական բառին տեղ «Եօթնուստիլէն»-ի նման բարդութիւններ գործածել, որոնք բոլորովին անիմաստ են եւ կը նմանին վերջերս բժշկական բառերն հայացնելու գործաւ եւ—անհամ փորձին... Կար երեւմն ձգտում մը՝ ամեն եւրօպական բառ հայացնելու եւ այս հայաստանի մասնաւոր կը համարուէր. սակայն դառն է՝ ըստ կարելւոյն օտար բառ չը գործածելու միտումը, եւ դառն չինքնաբերական իմաստաւոր խոսքերով մը ստեղծել մեր լեզուի մէջ... Շատ մը եւրօպական բառեր համազգային են եղած, եւ համազգային ալ կրնան եւ պէտք են գործածուիլ:

Դենք թէ «օպերա»-ի փոխարէն գործածել ենք «թատերադրութիւն». ինչ գրեմք օպերանտի տեղ.—երեւի «թատերադրութիւն» լինէր գրեմք «բալետ» տեղ.—երեւի «կապուստանտ»-ը փոխարէնէր: Հրաշալի է, չէ: Կոլտուրա» բառի տեղ մեզ խորհուրդ են տալիս գործ ածել «քաղաքակրթութիւն». իսկ «գիւղիկ»-ը փոխարէնէր: Մենք աւտում ենք. «հողի կոլտուրա», բացի ինքնի կոլտուրա: Հետեւելով վիեննայի վարդապետների խորհուրդներին, պիտի, ուրեմն, գրենք. «հողի քաղաքակրթութիւնը», «բացի ինքնի քաղաքակրթութիւնը»: Եւ կը փառաւորվի առջանա-ղան ինքու, այնպէս չէ: Բայց պիտի ըստի—չարունակում է յօդուածագիրը—թէ այս բոլոր իմաստը օտար բառին նկարագրական չունի ճշդիւ. ահա յայտ է յանցաւոր ուսանայ մասնաւոր, որ այլուր նուիրագործուած եւ կիրառութեան մէջ եղած բառերն արտաբերվով իր սիրականերէն, անոնց ժողովրդականացման, ընդհանրացման արգելք կըլլայ: Ո՞րն է այդ «այլուր», ուր նուիրագործված բառեր կան: Անշուշտ Վիեննայի, Վիեննան եւ Կ. Պոլսի: Ժիշդ է, Կ. Պոլսում գիտեն թարգմանել ամեն ինչ. բայց ինչ է դուրս գալիս այդ թարգմանութիւններից. «Փրակը» այնտեղ թարգմանում են «պոլիտիկոս», բայց դա մի թարգմանութիւն է, որ միայն զուար-ճաստութիւնների մէջ կարող է տեղ ընել: Այդպէս գնալով մենք, ի հարկէ, օտար ոչ մի բառ չենք ունենայ. բայց այդ դէպքում ինչու համար ենք վրդովվում «աղեմանաբառաւորութիւն» կամ «աղեմանաբառաւորութիւն» բառերից, որոնք նոր լոյս եկան Գուրգու Լուսինեանի բառարանում: Եւ չը նայած այս թարգմանական եռանդին, դեռ մնում են շատ ու շատ օտար բառեր, որոնց թարգմանել չեն կարողանում ոչ Միխիլ-բեանները, ոչ էլ նրանց աշակերտ պոլսեցիները: Հենց այսօր ստացված «Արեւելք» մէջ պատահում ենք այսպիսի նախադասութեան. «Զնորհակալութիւններս յայտնել ձեր այն compliment-ներուն համար»: Երբ ուսանայ լրագիրը նոյն օտար բառը գրում է հայերէն տառերով, հայկական լեզուի անկող նախանձախնդիրները վայնասուն են բարձրացնում. իսկ երբ արեւմտեան հայերը բոլոր օտար բառերը գրում են լատինե-րէն տառերով կամ նօտր հայերէն գրելով, դա արդէն հիացմունք է ազդում նոյն ինչ նախնի նախանձախնդիրներին: Բայց բաւական չէ, որքան չափաւորեցին այս յիմարութիւնը. սա վերջապէս ծիծաղելի է, վերջապէս մի անվայել բան է չափահաս մարդկանց համար...

Ահա ինչ են ասում առողջ դատողութիւնը եւ իսկական զարգացումը: Եւ ինչու, հարցնում ենք, Հ. Վ. Մելք. չէր կարողում Հ. Մէնէլիչեանի այս տողերը: Ո՛չ, այս հանգամանքն էլ դալիս է մեզ ցոյց տալու, որ Հ. Մելք. հենց նոր է եկել Տաւրիսիայից եւ չէ տեսել ոչ միայն Մշակին երեսը, այլ եւ չէ իմացել թէ մի եւ նոյն հարցի առիթով մի քանի երես առաջ ինչ է ասել իր աւելի կարող, աւելի հեղինակաւոր միաբանակիցը—Ողորմելի խմբագրութիւն... ՕՊԵՐԱՅԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄՆԵՐԸ Գաստրօլ-ներկայացումները սկսվեցին երկու-շաբթի, փետրվարի 19-ին: Հրաւիրվածներից առ այժմ բեմ դուրս եկան երեքը. Վաչեանի «Լօէնգրինուս» կայսերական թատրոնների արտիստների լիբրի—սօպրանօ Ա. Բոլսկա, Չալ-կովսկու «Եւգենի Օնեգինուս» կայսերական թատրոնի բարիտոն Լ. Նալկովսկի, Բիզէի «Կար-մէնուս» յայտնի արտիստների դրամատիկ-սօպրանօ տ. Տէրեան-Ղորանեան, եւ հինգ-շաբթի, ամսվա 22-ին, Վերդիի «Տրափաու-յում» դարձեալ Ա. Բոլսկա... «Լօէնգրինուս» կատարում էին տենոր Բօ-րիսենկօ Լօէնգրինի դերը եւ Ադել Բոլսկա—Ելզայի: Այս երկու դերի չորսն է պտուղում ամբողջ օպերան, բայց առաւել տենորի, հե-տեւապէս սօպրանօն այնքան մեծ չէ, որով Ա. Բոլսկան ինչքան էլ գրաւիչ խաղար եւ եր-գէր, այնու ամենայնիւ չէր կարող իր տա-ղանդը ցոյց տալ: Ուրիշ բան էր «Տրափաու-յում», ուր Ա. Բոլսկան կարողացաւ ցոյց տալ իր արտիստական չորսը եւ տաղանդը: Ար-տիստներու խաղը եւ միմիկան նուրբ մտածված եւ բովանդակութեան համապատասխան են աս-ման տեղ: Չայնի ներքեւի ընդհանուր զօրեղ է, իսկ միջինը շատ դուրեկան. նա շատ զբաւիչ է իր երգեցողութեամբ պիտի դրամատիքական եւ բնական մասերում, ինչպէս, օրինակ, երկ-րորդ, երրորդ եւ չորրորդ գործողութիւնների մէջ, ուր հասարակութիւնը անընդամեն հետե-ւում էր նրա խաղին եւ երգին գրեթէ յափ-տալուութեամբ: Տ. Տէրեան-Ղորանեանի ներկայացրած կար-մէնը զարմանալի աջողութիւն ունեցաւ եւ ա-ռանձին բաւականութեւն պատճառեց հասա-րակութեան: Իր տաք անմպրանաւոր կարե-լի է ասել՝ հազուադէպ քննադէպ էր նա բեմի վրա: Ինչպէս նշարել ենք, արկնով խաղը մեծ դեր է կատարում օպերայում: Տիկնոջ ողբեր-գական տեսարանները չափազանց կրակոտ են արդէն սպառել են իրանց աշխատանքները եւ այս ու այն կողմ ընկնելով՝ փող են ձեռք բերում մի քանի պուղ ալիւր գնելու: Յորենի գինը բարձր չէ, որովհետեւ բերքը Անդրկովկասում ընդհանրապէս բաւարար էր: Յորենի ներկայումս արժէ 95 կօպէկից մինչեւ 1 ր. 5 կ. Տեղական ցորենը վատ յատկու-թեան է, Կոչու եւ երեւմն դառնահամ: Յամե-նայն դէպս սով չը կայ այն մտքով, թէ հայ չէ ճարվում: Հայ կայ, բայց գիւղացին միջոց չունի հացը գնելու: Ազգաբնակիչները գրկվել է իր գնելու ընդունակութիւնից: Տեղական մագործների եւ անանաբոյսի տուած տեղեկութիւններից երեւում է, որ այս տարի Ախալքալաքի գաւառը, ինչպէս եւ պէտք էր սպասել, մեծ քանակութեամբ ծախեց տը-նային կենդանիներ: Անցեալ 1900 թուի յուն-վարին չօվարին տաւարի հարկից անացվել էր 18 բուրլի 30 կ., իսկ ներկայ 1901 թուի յուն-վարին 116 բուրլի. անցեալ փետրվարին ստաց-վել է 33 ր. 4) կ., իսկ ներկայ փետրվարի միայն կէսին արդէն ստացվել է 76 բուրլի: Դախվում են մեծ մասամբ եզեր եւ գեր թուրթեան մէջ: Նրանք ծախվում են ոչ խոտի պակասութեան, այլ անային կարիքի պատճա-ռով: Սարվան գիւղի թուրթերը, որոնք ամեն տարի գալիս են Թիֆլիսի համար մագուռ գնե-լու, այս տարի մեծ գործ տեսան Ախալքալաքի գաւառում: Շրջակայ գաւառներում ծախու-տաւոր քիչ է, որովհետեւ բերքի առատու-թեան պատճառով ոչ ոք չէ ուղում ծախել իր տնային կենդանիները: Իսկ Ախալքալաքի գա-ւառում կենդանիները ծախվում էին 5, 10, 15 բուրլով աւելի էժան, քան չրջակայ տեղե-րի: Ինքը քաղաքը չէ կարող ազդել գների վրա, որովհետեւ նա այս տարի միայն չէ սպառում եւ առհասարակ իրան շատ համեմա- եւ հաւաք է պահում: Այս դրութեան մէջ մենք գտանք Ախալքալա-քի գաւառը: Ալ. Գալանթար

Եւ երգեցողութիւնը դրամատիզմով լի։ Առանձնական երգերից լաւ տպւորութիւն գործեց երրորդ գործողութեան մէջ խաղաղութիւնը վրա վիճակահանութեան տեսարանը։ Հասարակութիւնը պատուեց իր համաքաղաքացուն հոն վնջերով եւ ընծաներով։

Թիֆլիսի ծանօթ բարիտոն Լ. Եակովլեւ այս գաստրօններին ձայնը գրեթէ կորցրած բեմ դուրս եկաւ։

Կարա-Մուրզա

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

Բազու, փետրվարի 20-ին

«Մշակ» № 35-ի մէջ Բազուի պ. լրատունը գրում է, իբրեւ թէ՛ եւ «համախոսական թերթ» ձեռքիս պատում եմ ճաշարանները, հիւրանոցները եւ յաճախողներին օդի եւ գինիով հիւրասիրում, որ համախոսականն ստորագրեն։ Աւելացնում է եւ, պ. լրատուն, «մենք մեր աչքով նրան տեսանք մի քանի էթանալիկ ճաշարաններում համախոսականն ստորագրել»։

Թայտուէք ասելու, որ ձեր այդ պ. լրատունը ստել է... Անա ինչպէս։ Անցեալ յունվարի 21-ին Վեհափառ Հայրապետին մի խնդրագիր ներկայացրի (առանց ոչ մի համախոսականի), որ ինձ, որպէս «հիմնովին անծուխ քահանայի», Բազուի մի յետիւն անկիւնում ծխատէր նշանակէ... Վեհափառն էլ խնդիրս յարգելով՝ մակագրելով, հէնց նոյն ամսի 23-ին № 122-ով հրամայում է Շամախու ատենին, որ ինձ յանձնեն տեղիս Բիբի-Ելքաթ, Բայիլ եւ Բոմանի քաղաքամասի բնակիչների հովուութիւնը, նոյնպէս եւ տեղիս ս. Աստուածածին եկեղեցուն միաբան նշանակին։

Յովհ. քահ. Նալբանդ

ՆԵՐՔԻՆ ԼՈՒԻՆՐ

«С. П. Вѣд.» լազրում կարդում ենք. «Փետրվարի 16-ին, Վրաստանում Պաւլ Ի կայսրի այն բարձրագոյն հրովարտակի հրատարակման հարկւրամայ տարեդարձի օրը, որով Վրաստանը ընդունվում էր Ռուսաստանի հովանաւորութեան տակ, Ալեքսանդր-Նեւսկի վանքի Ֆեօդորեան եկեղեցում հոգեհանգիստ կատարվեց վրաց Գեօրգի թագաւորի, նրա ամուսին Մարիամ թագուհու, հանգուցեալ արքայորդիների, արքայադուստրների, պաշտառափայլ իշխանների եւ իշխանուհիների իշխանական Հոգեհանգիստի ներկայ էին իշխաններ՝ Ի. Գ. Գրուզինսկի իր ամուսնու հետ, Ճավաժվաձէ, գեներալ Երմոլով, մարիլի Ալեքսի, իշխան Աբա-մէլիք—Լազարեւ, իշխան Փալաւանդով, իշխանուհի Օբոլէնսկայա եւ ուրիշները։ Հոգեհանգիստից յետոյ իշխան Ի. Գ. Գրուզինսկի թարմ ծաղիկները պատկ գրեց Պաւլ Ի կայսրի գերեզմանի վրա Պետրո-Պաւլովսկի տաճարում։

Հինգշաբթի, փետրվարի 22-ին, Թիֆլիսի արտիստական ընկերութեան դահլիճում, տեղի ունեցաւ մի կօնցերտ, մանուկների խնամատար ընկերութեան օգոյնս Կօնցերտին մասնակցում էին տիկին Տէրեան-Կորգանովա, եւ օր. Միխայիլով, ջութակահար Վասիլիւի, երգիչ Բորչի եւ ոտանաւոր ասողներ ու պատմողներ։ Ձմեռեան, Փափանակեան եւ Բլաւոյի Տիկին Տէրեան գեղեցիկ կերպով երգեց «Սրօզիադա» օպերայի եւ Գալիլեյի «МЫ СМЕРДЯЩИЕ СЪ ТОБОЮ» րօմանսը, իսկ Եիս-ին երգեց «И НОЧЬ, И ЛЮБОВЬ И ЛУНА»։ Երգը շատ մշակված է եւ մտածված։ Կօնցերտից յետոյ տեղի ունեցան պարեր։ Երեկոյթը դրաւ էլ մեծ բազմութիւն։ Երեկոյթի կառավարչուհին էր տիկին Ս. Լալայան։

Քաղաքային կուրքների գործունէութիւնը, որոնք իրանց բարեկեցութիւնը հիմնում են թղթախաղի վրա, վերջապէս դարձրեց իր վրա կառավարութեան լուրջ ուշադրութիւնը։ «С. П. Вѣд.» լրագրի անդրի՝ կառավարութիւնը մտադիր է փակել կուրքների մի մասը, իսկ միւս մասի մէջ բոլորովին արգելել մեծ գումարների թղթախաղը։

Մեզ հաղորդում են, որ մօտ օրերում Թիֆլիսի ս. Գեօրգ Կաթողիկէ եկեղեցու քահանաներից մէկը մի չնչին առիթով մեղադրւում է այդ նոյն եկեղեցու ժամարի սենեակը եւ սկսում է ամենայն անխղճութեամբ ծեծել ժամարի կնոջը, որ գրկած է լինում իր ծծկեր երեխային։ Ծննդու ժամանակ երեխան վայր է ընկում գետին եւ վիրաւորվում։ Այդ ժամանակ ներս է մտնում սենեակը եւ կնոջ ամուսինը, որ մի չքաւոր գիւղացի է Աբարանի կողմերից։ Քաջագործ քահանան, տեսնելով

ժամարին, թողնում է ձեռքից նրա կնոջը եւ յարձակվելով ժամարի վրա՝ բռնում է նրա բնից ու սկսում է խեղդել։ Կողմնակի անձինք միայն, թափվելով սենեակ, կարողանում են աղատել ժամարին քահանայի «մեծ բռնուցքները»։

Մեզ խնդրում են տպագրել հետեւեալը. «Փետրվարի 2-ին, Թիֆլիսի ժողովարանի դահլիճում, երկրորդ էթանալիկ գրադարանի եւ Հաւաքարի բաժանման օգոյն տրված բարեգործական համերգից եղել է մուտք՝ տոնակներին եւ ծրագրիներին 715 ր., պրէմիայից 57 ր., ընդամենը 772 րուբլի։ Ծախսերը՝ դահլիճին 150 ր., մասնակցողներին 2-ին 75 ր., մարկաների 33 ր. 50 կ., դահլիճում 20 ր., ափիշաներ տպելու 22 ր. 25 կ., միւս ծախքեր (ծաղկափնջեր, ծառաներին եւ այլն)՝ 21 ր. 5 կ., ընդամենը 321 ր. 80 կ.։ Ձուտ արդիւնք մնացել է 450 ր. 20 կ., որից 33 ր. 50 կ. դեռ չէ մտել դանձարանը։ Գրադարանատէր Մ. Ա. Սունդուկեանը յայտնում է իր խորին չնորհակալութիւնը ուտ. Սպեղիարեանին, Ա. Ի. Թուրպիլին, Վ. Մ. Ամիրջանիին եւ պ. պ. Ա. Գ. Բուչին, Էնրիկ Բրօշին եւ Ա. Ս. Չմէկեանին, նրանց համերգին ձրիաբար մասնակցելու համար, պրէմիաներ տուով անձանց եւ «Մշակ», «Нов. Об.» «Тифл. Л.» թերթերի խմբագրութիւններին, առաջինին յայտարարութիւնը ձրի, իսկ վերջին երկուսին գեղջով տպագրելու համար եւ բոլոր այն անձանց, որոնք նպաստեցին համերգի աշխուժեցմանը։

ԵՐԵՒԱՆԻՑ մեզ հաղորդում են, որ փետրվարի 10-ին տիկին Մարիամ Մէլիք-Աղամալեանի նախաձեռնութեամբ կայացած երեկոյթը յօգուտ քաղաքի չքաւորների անցել է շատ աշուղ։ Պ. Իսահակ Մէլիք-Աղամալեան երեկոյթի բոլոր ծախսերը, մօտ 200 րուբլի, վերցրել է իր վրա, այնպէս որ ամբողջ արդիւնքը, մօտ 1200 րուբլի, մնացել է յօգուտ չքաւորներին։

ԱՐՄԱՒԻՐԻՑ մեզ գրում են. «Բազուի հայ դերասանական խումբը, ղեկավարութեամբ պ. Արեւիանի, տեղի ժողովարանում փետրվարի 14-ին ներկայացրեց «Թագի համար» դրաման։ Վերոյիշեալ դրաման բոլորովին անյարմար էր տեղիս չէրքեզախօս հայերի համար. դրամանում ենք, որ դերասանները ուշադրութիւն չէին դարձրել այդ հանգամանքի վրա։ Տեղիս հասարակութիւնը փայլուն էր իր բացակայութեամբ, բայց չը նայելով դերասանների յուսահատութեան, այնուամենայնիւ խաղը անցաւ եթէ ոչ լաւ, գոնէ բաւարար։ Շատ լաւ խաղաց պ. Արեւիանի։ Միւս դերակատարներին աչքի էր ընկնում իր զգացված խաղով պ. Ստեփանեանը։ Միջադէպի դերում։ Վատ չէին տ. Փառնանձէմը Անայի դերում եւ օր. Մարի-Հրանդը։ Առաջիկայ հինգշաբթի, ամսի 22-ին, խաղաւու են «Ոթէլլօ»։ Յանկանք աշողութիւն»։

ՂՈՒԲԱՑԻՑ մեզ գրում են. «Սօվաթլար գիւղից մի կին, Սարա Մէլիք զրգի անունով, անհաւատարիմ է դառնում իր ամուսին Գիւլ Ուլային եւ անտակութեամբ է պարագում. նա կարողանում է գտնել մի շարք սիրահարներ, որոնց հետ նա տեսնվում է պայմանաւորված ժամանակը գիւղից մօտ գտնվող անտառապատ աղբերի առաջ։ Անցեալ տարվայ մարտի 15-ին Սարան ունենում է այդ տեսակ մի սիրային տեսակցութիւն իր սիրահարներից մէկի հետ նոյն աղբերի մօտ։ Նրա ամուսին Գիւլ Ուլայը ազգական՝ Հաջի-Մահմէդ-օղլուն իմանում է այդ բանը, վերցնում է սուրը, հրացանը եւ գնում է անհաւատարիմ կնոջ ետեւից ու գտնում է նրան սիրահարի հետ գրկված։ Սիրահարը առաջին րօպէում նկատելով կնոջ առանձն ազգականին, իսկոյն հեռանում է այդ տեղից, մնում է Սարան, որը հայտնում է Հաջիին եւ ասում է նրան թէ դու իրաւունք չունիս իմ գործերի մէջ խառնվելու։ Հաջի-Մահմէդ-օղլուն զայրանում է եւ երկար չը մտածելով դատարկում է հրացանը նրա վրա, որից տապալվում է գետին Սարա-Մէլիք զրգին. այդ բաւական չէ. սրով նրան երկու վերջ է հասցնում, որից Սարան չուտով մննում է։ Այդ սպանութիւնը կատարելուց յետոյ՝ Հաջի-Մահմէդ օղլուն յայտնում է գիւղական տանուտէրին, որ ինքն է կատարել այդ սպանութիւնը, բայց մի եւ նոյն ժամանակ զրպարտում է իր միւս ազգական՝ Կաֆլան-Օսման-օղլուն, որի գրգռմամբ իբր նա այդ սպանութիւնը կատարել է։ Գիւղից բանտարկում է եւ Կաֆլանին։ Ներկայ փետրվարի 16-ին Բազուի նահանգական

դատարանի այտեղի քրէական բաժնում այդ գործի քննութիւն էր նշանակված. Կաֆլանին պաշտպանում էր Մ. Սալամէզեան։ Դատաւորները երկար խորհրդակցելուց յետոյ, արդարացին Կաֆլան-Օսման-օղլուն, իսկ Հաջի-Մահմէդ-օղլուն մեղաւոր ճանաչելով դատաւարտեցին»։

ԱՐՄԱՒԻՆ ՏԵՍՈՒԹԻՆ

ՆԱՄԱԿ ԳԵՐՄԱՆՆԵՐԻՑ

Յրայբերգ, փետրվարի 27-ին

Մեծ, համարեա թէ անփոխարինելի կուրուտ ունեցաւ փետրվարի 26-ին Յրայբերգի հիւսուտից լեռնային ձեմարանը։ Վախճանվեց հոգեկաւոր միներալօգ Վայսբախ (Weisbach)։ Հանգուցեալը յայտնի միւսանիկ Եուլիուս Վայսբախի (Julius Weisbach) որդին էր. նա ծնվել է 1833 թ. գեկտեմբերի 6-ին։ Միջնակարգ դպրոցն աւարտելուց յետոյ յաճախել է նախ Յրայբերգի ակադեմիան, յետոյ Լայպցիգի, Բերլինի, Գէտինգենի եւ Հայդելբերգի համալսարանները։ Վերջիւսում ստացել է դոկտորութեան աստիճանը։ 1857 թ. նշանակվեց այն ժամանակվայ Յրայբերգի ակադեմիայի միներալօգիայի պրօֆէսոր Բրայտաուպտի (Breithaupt) ափսոսեան, 1858 թ.ին ղօցնեւ եւ 1866-ին միներալօգիայի պրօֆէսոր։

Հանգուցեալը ուսանողներից սիրված պրօֆէսորներից մէկն էր. ուսանողները յափշտակութեամբ լուում էին իրանց ալեղարք ուսուցչի հանգնելով, սրախօսութիւններով համեմատված, պարզ եւ գեղեցիկ լեզուով դասախօսութիւնները։ Այս ուսանական տարվայ հէնց սկզբից Ա. Վայսբախ հիւանդանալով, անկարող եղաւ շարունակել իր սիրած առարկայի դասախօսութիւնները։ Խեղճ ձերուհին ստացաւ ուղեղի փախելում, մի փոքր ժամանակից յետոյ էլ վրա հասաւ սրտի պայթումը եւ վերջ տուեց նրա թանգարդի կեանքին։

Վայսբախի յշատակը անմոռաց կը մնայ նրա խլարհիս ամեն մի անկիւնում, ամեն մի ազգութեան պատկանող հարեւաւոր աշակերտների սրտերում։ Յանձին նրա Յրայբերգի ակադեմիան կորցրեց իր փայլուն աստղերից մէկին, այդպիսիներ նա ունեցել է շատ։ Ղրեմի իր 135 տարվայ երկար գոյութեան ժամանակ, այժմ էլ ունի—յանձին Winkler-ի եւ Ledebur-ի։

ԱՐՄԱՒԻՆ ԼՈՒԻՆՐ

—Դէրուլէզի մերկացումները նրա անաշուղ փորձի մասին տապալու պարլամենտական հանրապետութիւնը զինուորական coup d'etat-ի միջոցով (1899 թ. փետրվարի 13-ին) դարձրին իրանց վրա ֆրանսիական ամբողջ ամուլի ուշադրութիւնը։ Ահա թէ ինչ հաղորդեց մօտ օրերում Դէրուլէզ իր անաշուղութեան մասին. «Էլէրում պատանձ յայտնի միջնադէպի նախնիքաց օրը, ժամի 2-ին կէսօրից յետոյ, այն սենեակը, ուր նստած էինք եւ Մարսէլ Գարէր, մտաւ մի մարդ, որի անունը նա չեմ տայ, բայց որին մենք հիմք ունէինք մեր կողմնակից համարելու։ Նա առաջարկեց ինձ հետեւեալ երկու հարցերը։ «Այսպէս ուրեմն փնդը»։ Ես դրական պատասխան տուի։ «Բայց ինչ կասե՞ք դուք, — շարունակեց այցելուն, — եթէ վաղ ձեր բարեկամների մէջ յանկարծ երեւայ Օրլէանի դուք»։ Ես պատասխանեցի, թէ այն ժամանակ եւ կը հրամայեմ ձերբակալել նրան, որովհետեւ ես պէրբիցիտար հանրապետական եմ եւ նոյնքան թշնամի եմ միապետութեան, որքան եւ պարլամենտական հանրապետութեան։ Եւ ինչ դուրս եկաւ։ Հետեւեալ օրը մենք համադրեցինք, որ մի ինչ-որ աներեւոյթ ձեռք քանդել է մեր բոլոր պատրաստութիւնները։ Զօրքերի տեղաւորութիւնը, հրամանները, օրօպետներն անձնական կազմը—ամեն ինչ փոխված էր, իսկ երեկոյեան եւ Գարէր կալանաւորվեցին։ Սրանից աւելի եւ ոչինչ չեմ ասի։ Բայց ես այնքան եմ այն բանի վրա, որ իմ փորձն չափովից միմիայն րօյալիստների դաւաճանութեան պատճառով նրանք հասկացան, որ ես թող չեմ տայ տապալել հանրապետութիւնը։ Ժօրէս «Petite Republique» լրագրում հաւատացնում է, որ Դէրուլէզի մերկացումները րօյալիստների վերաբերմամբ հզուտ ճշմարտութիւն են։ Այն անձը, որ հաղորդել է րօյալիստներին Դէրուլէզի դիտաւորութեան մասին, եղել է ոչ այլ ոք, եթէ ոչ յայտնի անտիսեմիտ Գէրէն։ Այսպիսով պարզվում է, որ հանրապետութեան դէմ երկու տարի առաջ ուղղված փորձը չէ աշողվել միայն նրա համար, որ վերջին րօպէում րօյալիստների եւ Դէրուլէզի կողմնակիցների մէջ տեղի է ունեցել մրցութիւն։

—Վերջնապէս հետադրում «Le Temps» լրագրին, թէ դիվանագիտական շրջաններում խօսակցութեան առանձին առարկայ է դարձել այն տարաձայնութիւնը, որ ծագել է Ալեքսանդր

թագաւորի եւ Յրանց-Յովսէփ կայսրի մէջ Միւլանի թաղման առիթով։ Ասում են, թէ լեռնաւոր թագաւորը զանգաւորել է Ռուսաստանին եւ Գերմանիային Աւստրիայի վարժուքի դէմ, բայց պատասխան է ստացել, թէ այդ գործը ընտանեկան է, որի մէջ խառնվել չեն կարող ոչ Ռուսաստանը եւ ոչ Գերմանիան։

—Անգլիական գեներալ Վուդ իր յօդուածում, որ գետեղված է «Times»-ում, հաշու է, որ հարաւ-աֆրիկական պատերազմի սկզբից մինչեւ հիմա անգլիական զօրքերի թիւը այդ պատերազմում եղել է 282,000, որոնցից սպանվել եւ մեռել են զանազան հիւանդութիւններից 13,000 հոգի, իսկ զօրքի շարքերից դուրս են եկել ստացած վէրքերի եւ հիւանդութիւնների սպառնաւոր 64,000 հոգի։

—«Le Journal» նկատում է, որ հակառակ պետութիւնների խոստմանը հետեւելու անհաւատք քաղաքականութեան, նրանք սկսում են մտածել Չինաստանից երկիրներ ձեռք բերելու մասին, որպէս մի այնպիսի միջոցի, որ միայն հնարաւորն է ներկայ հանգամանքներում չինական հարցը լուծելու համար։ Լրագիրն այդ պատճառով ասում է, թէ քանի որ Չինաստանը մնում էր անձեռնմխելի, Փրանսիան եւս ստորաւոր էր պաշտպանել նրան, բայց երբ նա սկսում է կորցնել իր ամբողջութիւնը եւ մասերի բաժանվել, Փրանսիայի կողմից յիմարութիւն կը լինէր շարունակել նախկին քաղաքականութիւնը։

ՄՇԱԿԻ ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՌՈՒՍԱՑ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆՑ

22 փետրվարի

ԼՕՆԴՕՆ. Կիտլինքերի հետագիրը Պրէտ-րիայի. «Դէրուլէզի գործերը յարձակում գործեցին Լիխտենշեյնի վրա։ Կիտլ-ամբողջ օրը շարունակվեց. երկու օֆիցէրներ (անգլիական) սպանված են։ Լիխտենշեյնի բերդապահ զօրքը բաղկացած է 500 մարդուց երկու թիւանութիւնով։ Կիտլինքեր այնտեղ օգնական զօրքը ուղարկեց։

ԲԵՐԼԻՆ. Կայսրը ժամանեց առաւօտեան Տ ժամին։ Կայսրին կայարանում դիմաւորեցին կայսրուհին եւ կայսերական կանցլերը. նա ընդունեց պրօֆէսոր Բէրգմանին։ Կայսրը ներկայ չէ լինի Պոստղամուս բանակ դրած հեծելաշօղի զինքերի այսօրվայ զօրանդէմին։

Պրէտօրի. Այստեղ յուսալից տրամադրութիւն է տիրում պատերազմի շուտ վերջնաւոր հաւանականութեան վերաբերմամբ։ Սպասում են, որ բօէրները կանեն առաջին քայլ խաղաղութեան պայմաններ ձեռք բերելու նպատակով։

ԲԵՐԼԻՆ. Կայսրը վերջ է ստացել երկաթէ կտորից այտի վրա աջ աչքի տակ։ Վէրքը, ըստ երեւոյթին, ծանր չէ, որովհետեւ կայսրը ամբողջ ճանապարհին մինչեւ կայարանը ոչինչ չտեսցէր իր ամառի իր կողքին նստած բուրգօմիտարին եւ միայն կայարանում սփռուած ցոյց տուեց, որ արնոտած է նրա այտը։ Յանցաւոր փորձ անողը ընկաւ կառքի ետեւը դնալով փորձ անողը անհաւատի ձիերի տակ։ Հասարակութիւնը բռնեց, իսկ ոստիկանները ձերբակալեցին նրան եւ տարան քաղաքային խորհրդի շինութիւնը։ Հարցաւորձի ժամանակ նա մի քանի անգամ ընկաւորվեց, բայց մէջ ընդ մէջ նա կարողանում էր ցուցմունքներ տալ։ Յանցաւոր փորձ անելու առիթների վերաբերմամբ նա ոչինչ բացատրութիւններ չը տուեց։ Նրա մօտ գտնված զեղից երեւում է, որ նա մշտապէս հիւանդ է ընկաւորութեամբ։

ՍՕՄԵՐՍԷՏ-ԻՍ. Այն բօէրները, որոնք զերաւեցին Պրետում, բաղկացած էին 700 մարդուց, երկու թիւանութիւն։ Բրիտանական բերդապահ զօրքը, որ բաղկացած էր մօտաւոր ապէս 75 մարդուց, քաղաքում պաշտպանվում էր, բայց չը կարողացաւ դիմանալ գերազանց թիւի առաջ։ Այսօր ժամաւախտով հիւանդանալու հի. դէպքեր կային, երկու կապակեղի ժանտախտային դէպքեր եւ յայտնի են էլի հիւանդութեան ութ դէպքեր ժամաւախտով հիւանդների հետ չփելուց։ Ստեղծուած իրանդացողի մասին, եւ հիւանդ պատկանում է սպիտակ սղգաւառ-կութեանը։

ԿԱՊԵՏՏԱՆ. Երեք հարիւր բօէրներ երէկ յարձակում գործեցին Էրէրդիլի վրա, բայց չուր ժամ շարունակվող կռիւց յետոյ չեմ մղվեցին։ Բերդապահ զօրքը ոչինչ կորուստներ չունեցաւ։ Օրանձեան գետով անցնելով, Դէվլտ դիմել դէպի հիւսիս, Յիլիպպօլիսի ուղղութեամբ։ Հրացանաձիգները, որոնք կազմված էին Է. եւ Դ. Դէվլտի ոյժերից, հրացանաձիգութիւն էին միւս երեկ երկաթուղու գնացքի վրա Բիօնայի մօտ, բայց գնացքում գտնվող աւստրալական զօրաւորները յետ մղեցին նրանց։ Բօէրու.

Типографія Грузинск. Т—ва, Большая-Ванская ул., № 27